



Funded by
the European Union



«ԲՅՈՒՋԵ 360°»

ԶԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպության և «Ազոբա Սենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպության (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ուղղակի Ժողովրդավարություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բյուջե 360°» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ուղղակի Ժողովրդավարություն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Վանաձոր 2025

Բովանդակություն

Զեկույց	3
Ներածություն	3
1. Ուսումնասիրված փաստաթղթերի ծավալը	3
2. Դպրոցներին տրամադրված դրամաշնորհային ծրագրեր	3
3. Մանկապարտեզների սուբվենցիոն ծրագրերի ընթացքը	4
3.1 Թիվ 4 մանկապարտեզ	4
3.2 Թիվ 8 մանկապարտեզ	5
3.3 Գուգարքի «Երազիկ» մանկապարտեզ	5
4. Տեսանյութեր	5
Եզրակացություն	6
Առաջարկություն	6

Զեկույց

«Բյուջե 360» ծրագրի շրջանակում Վանաձոր համայնքում կատարված և ընթացիկ գնումների գործընթացների ուսումնասիրման վերաբերյալ Ներածություն

«Բյուջե 360» ծրագրի շրջանակում իրականացվել է Վանաձոր համայնքի հանրակրթության ոլորտի կառույցներում կատարված և ընթացիկ գնումների գործընթացների շուրջ 10,000 փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրություն: Վերլուծվել են դպրոցների և մանկապարտեզների ներկայացրած փաստաթղթերը՝ նպատակ ունենալով գնահատել բյուջետային ծախսերի նպատակահարմարությունն ու թափանցիկության մակարդակը:

1. Ուսումնասիրված փաստաթղթերի ծավալը

Ուսումնասիրվել է 30 դպրոցից 19-ի և 23 մանկապարտեզից 20-ի փաստաթղթային բազան: Հատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ փաստաթղթերին՝

- Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից տրամադրված 18 դպրոցների դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթեր,
- Թիվ 4, թիվ 8 և Գուգարքի «Երազիկ» մանկապարտեզների սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ նյութեր:

Ավելին, լրացուցիչ տեղեկություն ստանալու նպատակով, ինչպես նաև հետազայում հետազոտությունն ավելի հեշտ իրականացնելու համար՝

- Վանաձորի համայնքապետարան ուղարկվել է 8 հարցում,
- Լոռու մարզպետի աշխատակազմ՝ 3 հարցում,
- ՀՀ Ֆինանսների նախարարությանն ուղարկել ենք 1 առաջարկություն, որի ընդունումը կարող է ապագայում օգնել գնումների ընթացակարգերի մոնիթորինգով զբաղվող կազմակերպություններին, ինչպես նաև գնումներով հետաքրքրված քաղաքացիներին ավելի հեշտ գտնել տեղեկատվություն գնումների համակարգում:

2. Դպրոցներին տրամադրված դրամաշնորհային ծրագրեր

Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Լոռու մարզի Վանաձորի 18 դպրոցներին տրամադրված դրամաշնորհները նպատակ ունենին փոխհատուցել ուսուցիչների և աշակերտների տրանսպորտային ծախսերը: Դրանք տրամադրվել են այն դպրոցներին, որոնք ունեն այլ բնակավայրերից դպրոց հաճախող մանկավարժներ և աշակերտներ: Դրամ աշնորհների չափը համահունչ է եղել հաճախողների թվին՝ ապահովելով համաչափ մոտեցում բաշխման գործընթացում:

Այստեղ խնդիրը կայանում էր նրանում, որ դրամաշնորհային ծրագրին առնչվող ոչ մի փաստաթղթում կոնկրետ նշված չէր, թե դպրոցն այդ դրամաշնորհն ինչ նպատակով է ստանում, ավելի ճիշտ նշված էր, որ դպրոցն ստանում է դրամաշնորհ «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխատուցման» համար, սակայն բացված չէր, թե ինչ տրանսպորտային ծախսեր են, դրան ընթացիկ ուսումնական էքսկուրսիաների համար են, թե այլ նպատակ են հետապնդում: Այս ամենը խորն ուսումնասիրելու համար Լոռու մարզպետի աշխատակազմին հարցում ենք ուղարկել, որի պատասխանի հիման վրա էլ վերջնական հասկացել ենք, որ դրամաշնորհը տրամադրված է եղել այն դպրոցներին, որոնք ունեն այլ բնակավայրերից Վանաձոր եկող մանկավարժներ և աշակերտներ:

3. Մանկապարտեզների սուբվենցիոն ծրագրերի ընթացքը

3.1 Թիվ 4 մանկապարտեզ

- **1-ին փուլ** – Պայմանագիր՝ 2024թ. հուլիսի 9, կապալառու՝ «Հիդրովերանորոգում» ՍՊԸ, նախատեսված ավարտ՝ 2024թ. նոյեմբերի 1:
- **2-րդ փուլ** – Սկսվել է 2024թ. սեպտեմբերին, կապալառու՝ «Այպոշին» ՍՊԸ, նախատեսված ավարտ՝ 2024թ. դեկտեմբեր:

Չնայած ժամկետներին՝ մանկապարտեզը դեռևս շահագործման չի հանձնվել: Կառավարության 2024թ. դեկտեմբերի 27-ի N 2085–Ա որոշմամբ ծրագրի 2-րդ փուլի աշխատանքները հետաձգվել են մինչև 2025թ. նոյեմբերի 15:

Չնայած նրան, որ Վանաձորի թիվ 4 մանկապարտեզը չի շահագործվում, պետք է նշել, որ ընթացող շինարարությունն արդեն իսկ ունի քաղաքաշինության նորմերի խախտումներ՝

1. Երեք կողմից շինությունը սերտ հարևանությամբ է բնակելի տների և ցանկապատերի՝ ընդամենը 0.5 մետր հեռավորությամբ, ինչը խախտում է հակահրդեհային անվտանգության կանոնները:
2. Նոր մանկապարտեզը չունի առանձին մուտքեր դեպի պահեստ և խոհանոց, ինչը չի համապատասխանում սննդամատակարարման անվտանգության նորմերին. մատակարարվող սննդի շփումը այլ անձանց հետ այս կերպ հնարավոր չի լինի նվազեցնել, ինչպես պահանջում են համապատասխան չափանիշները:
3. Բացի նշված խնդիրներից, մտահոգիչ է նաև, որ նախագծում մանկապարտեզի բակային տարածք և խաղահրապարակ պարզապես չի նախատեսվել: Թեպետ սա կարող է չլինել կարգավորումների ուղիղ խախտում, սակայն մանուկների ֆիզիկական ակտիվության, խաղի և սոցիալականացման համար բացօթյա միջավայրի ապահովումը անհրաժեշտություն է:

Մանրամասներն՝ [այստեղ](#):

3.2 Թիվ 8 մանկապարտեզ

- **1-ին փուլ** – Սկսվել է 2021թ. օգոստոսին, կապալառու՝ «Իրտիգ» ՍՊԸ:
- **2-րդ փուլ** – Սկսվել է 2024թ. փետրվարի 9-ին, կապալառու՝ «Ռ. Ղազարյան» ՍՊԸ, նախատեսված ավարտ՝ 2024թ. նոյեմբերի 1:

Թեև ծրագիրը ավարտվել է, շենքը դեռ շահագործման չի հանձնվել: Աշխատակազմը գտնվում է հարկադիր պարապուրդում, ինչի հետևանքով համայնքային բյուջեից հատկացվում են ֆինանսական միջոցներ այն անձանց, որոնք փաստացի ծառայություն չեն մատուցում: Միևնույն ժամանակ՝ երեխաները զրկված են կրթության իրավունքից, իսկ ծնողները՝ աշխատելու հնարավորությունից:

3.3 Գուգարքի «Երագիկ» մանկապարտեզ

- **1-ին փուլ** – Սկսվել է 2024թ. հուլիսի 17-ին, նախատեսված ավարտ՝ նոյեմբերի 11, կապալառու՝ «Գեվտանիք» ՍՊԸ:
- **2-րդ փուլ** – Սկսվել է 2024թ. դեկտեմբերի 11-ին, պայմանագրով նախատեսված ավարտ՝ 150 օր հետո՝ 2025թ. մայիսին:

Ծրագիրն այժմ ընթացքի մեջ է: Գուգարքում գործում է հին տնակային մանկապարտեզ, մինչ նոր շենքը կառուցվում է այլ վայրում: Այս հանգամանքը թույլ է տալիս երեխաներին շարունակել հաճախել մանկապարտեզ, իսկ աշխատակազմին՝ պահպանել աշխատանքային ակտիվությունը՝ ի տարբերություն թիվ 4 և թիվ 8 մանկապարտեզների:

4. Տեսանյութեր

Ծրագրի շրջանակում պատրաստվել են 2 տեսանյութեր, որոնք նպատակ ունեն հանրայնացնել ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի և Armeps հարթակի հնարավորությունները՝ ցույց տալով, թե ինչպես կարելի է արդյունավետորեն որոնել ու ուսումնասիրել գնումներին վերաբերող փաստաթղթերը:

Ո՞րն է այս համակարգերի կիրառման տարբերությունը:

1. ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում կարող ես որոնել քեզ անհրաժեշտ ինֆորմացիան առանց շատ ֆիլտրելու հնարավորության, ուղղակի որոնման դաշտում գրում ես այն համայնքի

անվանում, որտեղ գտնվող կազմակերպությունների գնումներին առնչվող փաստաթղթերը քեզ անհաժեշտ են, այնուհետև որոնման արդյունքում բերված բոլոր փաստաթղթերի մեջ փնտրում ես քեզ անհրաժեշտ փաստաթուղթը: Նույն որոնումը կարելի է անել նաև պայմանագրի ծածկագրով, սակայն այդ ծածկագիրը միշտ չէ, որ հասանելի է լինում, առանց լրացուցիչ հարցում ուղարկելու:

2. Armeps կայքում որոնում իրականացնելն ավելի հեշտ է, քանի որ ֆիլտրելու տարբերակներն ավելի շատ են, այս կայքում նախ բաժիններով առանձնացված են պայմանագրերը, գնումների պլանները, հաշվետվությունները և այլն, բացի դրանից կարող ենք որոնումը կոնկրետացնել՝ գրելով պատվիրատուի անունը, գնման առարկան, գնման առարկայի կոդը, մատակարարը, պայմանագրի գնման ընդհանուր գումարը, պայմանագրի կնքման և մուտքագրման ամսաթվերը: Այս համակարգում կարող ենք որոնել նաև պայմանագրի ծածկագրով:

Կից տեսանյութերը՝

<https://www.facebook.com/directdemocracyngo/videos/592289227131616/>

<https://www.facebook.com/directdemocracyngo/videos/864514282413050/>

Եզրակացություն

Ուսումնասիրությունը բացահայտել է մի շարք համակարգային խնդիրներ՝ հատկապես սուբվենցիոն ծրագրերի ուշացումներ, շահագործման չհանձնված շենքեր, հարկադիր պարապուրդի հետևանքով համայնքային բյուջեից գումարների վատնում: Այս ամենը հանգեցրել է ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և կրթական իրավունքի սահմանափակման:

Առաջարկություն

Մանկապարտեզների շինարարության սուբվենցիոն ծրագրերի շրջանակում բյուջետային միջոցների արդյունավետության և ծրագրերի որակի ապահովման վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներից համատեղ ֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրերը կարևոր գործիք են՝ ուղղված ենթակառուցվածքների զարգացմանը, այդ թվում՝ նախադպրոցական կրթական հաստատությունների արդիականացմանն ու հասանելիության բարձրացմանը: Սակայն իրականացվող ծրագրերի մոնիտորինգը և տվյալների վերլուծությունը ցույց են տալիս, որ առկա են համակարգային բացեր, որոնք խոչընդոտում են այս ծրագրերի

իրական նպատակների իրագործմանը և նվազեցնում բյուջետային միջոցների արդյունավետությունն ու հաշվետվողականությունը:

Օրինակ՝ Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզի շինարարությունը:

Այսպես, ՀՀ Վանաձոր համայնքում 2022-2024 թթ. սուբվենցիոն ծրագրով իրականացվող թիվ 4 մանկապարտեզի շինարարական աշխատանքների ուսումնասիրությունը վկայում է մի շարք մտահոգիչ հանգամանքների մասին:

1. Տեխնիկական առաջադրանքում բացակայում է մանկապարտեզի համար խաղահրապարակի կառուցման պայմանը, ինչը թեև օրենսդրությամբ պարտադիր պահանջ չի հանդիսանում, սակայն անհրաժեշտ է երեխաների առողջ զարգացման համար:

2. Շենքը չի համապատասխանում հրդեհային անվտանգության պահանջներին՝ չունենալով բավարար մուտքեր փրկարար/հրշեջ տեխնիկայի համար, ինչը հակասում է Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 17 մարտի 2014 թ. N 78-Ն որոշման պահանջներին:

3. Շինարարության վայրը, նախագծային լուծումները և կատարված աշխատանքների ծավալները չեն ապահովում նախադպրոցական կրթության կազմակերպման հիմքային բաղադրիչները, ինչը ոչ միայն ռիսկեր է պարունակում երեխաների անվտանգության համար, այլ նաև ազդում է կրթության հասանելիության վրա:

Այս խախտումների պայմաններում հանրային բյուջեից հատկացված միջոցներն ուղղվել են կառուցման աշխատանքներին, որոնք չեն ապահովում ծառայությունների մատուցման հնարավորությունը: Բյուջետային մոնիտորինգի տեսանկյունից սա միանշանակ պետք է դիտարկել որպես անարդյունավետ ծախս, ինչը հակասում է ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սկզբունքներին, համաձայն որոնց բյուջետային հատկացումները պետք է ուղղված լինեն հանրային ծառայությունների մատուցման նպատակային և արդյունավետ իրականացմանը:

Շինարարական աշխատանքների ձգձգումը, սխալ պլանավորումը և տեխնիկական առաջադրանքների թերի կազմումը հանգեցրել են հետևյալ համակարգային խնդիրներին.

- Երեխաների՝ մանկապարտեզ հաճախելու հնարավորության վերացում՝ տարիքային խմբերի դուրս մնալու վտանգով:
- Ծնողների զբաղվածության իրավունքի խախտում:
- Մանկապարտեզների աշխատակիցների հարկադիր պարապուրդ՝ համայնքային բյուջեից շարունակաբար վճարվող աշխատավարձով՝ առանց փաստացի ծառայության մատուցման:

- Սուբվենցիոն ծրագրերի նպատակների իրականացման ձախողում և հանրային վստահության նվազում պետական ներդրումային մեխանիզմների նկատմամբ:

Այս համատեքստում պետք է արձանագրել, որ բյուջետային ծախսերը չեն բավարարում արդյունավետության և նպատակայնության սկզբունքներին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ **առաջարկվում է.**

1. Սուբվենցիոն ծրագրերի հաստատման կարգի փոփոխություն (ՀՀ կառավարության 2006 թվականի N 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի շրջանակում).

- Նախագծման փուլում պարտադիր դարձնել բացօթյա խաղահրապարակների կառուցման պահանջը՝ հստակ չափորոշիչներով՝ հիմնվելով սանիտարահիգիենիկ, կրթական և անվտանգության նորմերի վրա:

- Տեխնիկական առաջադրանքներում ամրագրել արտակարգ իրավիճակներում պատշաճ ենթակառուցվածքների, մասնավորապես՝ հրդեհային ելքերի և փրկարար մեքենաների մուտքի ուղիների առկայությունը:

2. Մշակել մեխանիզմներ՝ շինարարության ընթացքում երեխաների կրթական իրավունքը չխախտելու համար.

- Իրականացնել ժամանակավոր խմբերի ստեղծում գործող մանկապարտեզներում՝ օգտագործելով հարկադիր պարապուրդում գտնվող մանկավարժական անձնակազմը:

- Համայնքներում ներդնել ճկուն ռեզերվային մեխանիզմ՝ կրթական ծառայության անընդհատությունն ապահովելու նպատակով:

Այս առաջարկները միտված են ոչ միայն շինարարական ծրագրերի որակի և արդյունավետության բարձրացմանը, այլև պետական և համայնքային բյուջեների պատասխանատու և հաշվետու կառավարմանը:

Հանրային միջոցների արդյունավետ օգտագործումը պետք է դիտարկվի որպես առանցքային սկզբունք՝ հատկապես սոցիալական նշանակության ենթակառուցվածքների՝ այդ թվում մանկապարտեզների շինարարության դեպքում, քանի որ խոսքը վերաբերում է երեխաների կրթության և անվտանգ զարգացման իրավունքին: